ՇՈՂԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԵՆԹԱԿԱՅԻ ԵՎ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 10-ՐԴ Դ.ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

10-րդ դարի պատմագրության լեզվի ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի հին հայերենի վերջին նախամիջին, ենթաշրջանի լեզվական առանձնահատկությունները՝ քերականական կառուցվածքի, հնչյունական համակարգի և բառապաշարի կրած փոփոխությունները բացահայտելու տեսակետից: Լեզվական փաստերը վկայում են, որ էական փոփոխություններ են կատարվել լեզվական բոլոր մակարդակներում: Թեև հիմնականում պահպանվել են դասական շրջանի օրինաչափությունները, այնուամենայնիվ մատենագրությունը բազմաթիվ փոփոխություններ է արձանագրել:

10-րդ դարի պատմագրության շարահյուսական-շարադասական առանձնահատկությունները հիմնականում դրսևորվում են ենթակայի և ստորոգյալի ձևաբանական արտահայտության, դրանց համաձայնության, որոշչի և որոշյալի, ինչպես նաև հատկացուցչի և հատկացյալի համաձայնության, դրանց շարադասական տիպական կիրառությունների, նախդիրների և նախադրությունների կապակցման մեջ:

Գրաբարում ենթական սովորաբար արտահայտվում է ուղղական հոլովով, սակայն որոշ կառույցներում ենթական կարող էր հանդես գալ նաև այլ հոլովներով (սեռական, տրական, հայցական)[1]: 10-րդ դարի պատմագրության շարահյուսական կառուցվածքի մեջ ևս ենթական հանդես է գալիս և ուղիղ, և թեք հոլովաձևերով: Մենք չենք անդրադառնա ուղղական հոլովով ենթակայի գործածությանը, քանի որ դա նրա արտահայտության հիմնական միջոց է: Թեք հոլովաձևերով ենթակայի կիրառությունն այստեղ դրսևորվել է մի շարք առանձնահատկություններով.

1. Դեռևս դասական գրաբարին են բնորոշ այնպիսի նախադասությունները, որտեղ ստորոգյալի գործառույթով հանդես է գալիս ոչ թե դիմավոր, այլ անդեմ բայը, հատկապես՝ անցյալ դերբայը: Այս դեպքում ենթական հիմնականում հանդես է գալիս սեռական հոլովով: Ենթակայի և ստորոգյալի արտահայտության այս յուրահատկությունը բնորոշ է նաև 10-րդ դարի պատմագրությանը: Այսպես՝

[1] Տե՛ս Ս.Դ.Ղազարյան, Հայոց գրական լեզվի պատմություն, հ.Ա., Եր., 1961, էջ 397-401, Գ. Կ. Խաչատրյան, Գրաբարի շարահյուսության ձեռնարկ, Կիր., 1989, էջ 22-26, Վ. Գ. Համբարձումյան, Գրաբարի հնչնուսույց, Եր., 1999, էջ 208:

«Իսկ մերոյն Հայկայ լայնալիճ աղեղամբ զերեքթևեանն նետ դիպեցուցեալ երկաթագամ տախտակի կրծիցն Նեբրովթայ թափանցանց ընդ թիկունս յայնկոյս յերկիր յարստէր» (Դրասխ., 18): «Նախ Հայկայ շինեալ զտեղի ճակատուն դաստակերտ» (Ուխտ., Ա-27): «Եւ բերեալ քաջին Սուշեղայ զգեստս պատերազմաց առ Սուրբն Ներսէս, զի օրհնեսց ի նմանէ» (Մեսր., 92): «Զայս գործ լուեալ Լիդէացւոց թագաւորին Կրոսիսեայ բազմաշփոթ յուզմամբ ամբոխ արարեալ , զօրս բազումս գումարեալ, ելանել տալ պատերազմ ընդ Կիւրոսի» (Արծր., 64): «Զայն տեսեալ Սմբատայ թագաւորին Հայոց մախացեալ ընդ իրսն» (Անան., 438):

2. Սեռական հոլովով ենթականեր հանդիպում են անորոշ դերբայով արտահայտված ստորոգյալի հետ: Այսպիսի շարահյուսական կառույցներ հանդիպում են Հովհ. Դրասխանակերտցու, Թովմա Արծրունու և Ուխտանեսի պատմություններում, ինչպես «Որպէս դառնալ նորա ի չար ճանապարհէն և կեալ» (Արծր., 30): «Եւ յելանել Նոյի ի տապանէն եղև թագաւոր ի վերայ երկրի»[2] (Ուխտ., Ա-18): «Ի գալն Հայկայ և անուանել զիւր անուն, և յայնմհետէ տիրել ի նմանէ և անդր ամենայն աշխարհի արևմտից և հիւսիսի» (Ուխտ., Ա-18): «Իսկ ի նշկահելն Արշակայ զՎաղէնտիանոս կայսր մեծաւ ցասմամբ ապա Վաղենտինեայ լցեալ սպանանէ զեղբայրն Արշակայ» (Դրասխ., 50) :

Դրասխանակերտցին սեռական հոլովով ենթականեր է գործածել նաև անորոշ դերբայի գործիական հոլովածևի հետ. «Բայց Անակայ յետ երկեամ մի ամաց յիշելով զուխտն որ ընդ Արտաշրի, սպանանէ զԽոսրով» (Դրասխ., 40): «Իսկ Կրեսոսի զբանսն Սօղոնի 'ի յիշատակ իւր ածելով ասէ» (Դրասխ., 30): Մեսրոպ Վայոցձորցին և Անանունը այսպիսի կառուցվածքով նախադասություններ ընդհանրապես չեն գործածել:

3. Սեռական հոլովով ենթականեր հանդիպում են ոչ միայն դերբայներով, այլ նաև դիմավոր բայերով արտահայտված ստորոգյալների հետ: Սեռական հոլովի այսպիսի կիրառությունը 10-րդ դարի պատմիչներից հատուկ է միայն Հովհ. Դրասխանակերտցուն: Այսպես «Սորա հարուստ ինչ ամաց 'ի վերայ անցելոց կենաց ծնանի որդի զԱմասիայ» (Դրասխ.,18): «Ըստ երկնային այցելութեանն պատահի սորա տեղի օթևանի 'ի քնարանի սրբոյ Առաքելոյն» (Դրասխ.,40): «Իսկ նորա յետոյ բազում պնդութիւն և աներկիւղաբար երկս աշխատանաց յատենի ուղղոց ցուցանէր» (Դրասխ.,116):

---

[2] Այսպիսի կառույցներում սովորաբար հանդես է գալիս ոչ թե անորոշ, այլ անցյալ դերբայը:

4. Թովմա Արծրունին և հատկապես Հովհ. Դրասխանակերտցին գործածել են նաև տրական հոլովով արտահայտված ենթականեր: Գրաբարում տրական հոլովով ենթականեր կարող էին ունենալ միադիմի բայերը[3], նաև լինիմ, եղանիմ բայերը, երբ դրանք հանդես էին գալիս միադիմի բայի գործառույթով[4]: Լինիմ բայի հետ տրական հոլովի այդպիսի կիրառության օրինակներ հաճախ են հանդիպում ուսումասիրվող երկերում: Այսպես «Մի լիցի մեզ տիրել Պարսից անաստուածից» (Դրասխ., 46): «Վասն զի ոստիկանին կամ եղև զհիւսիսային դառնաշունչ ժամանակ ծմերային ցրտոյն 'ի Դվին անցուցանել» (Դրասխ., 200): «Որոց դէպ եղև ինձ հանդիպել եկելոց ոմանց ի յԱպղաստան աշխահէ» (Արծր., 48): «Եւ մանաւանդ զի հարկ փութոյ եղև մեզ գիտել զպայազատութիւնս երանաց տիրեցելոց մեր աշխարհի» (Արծր., 34): Նմանատիպ կառույցներ հանդիպում են նաև Ուխտանեսի պատմության մեջ, իսկ Մեսրոպ Վայոցձորցին և Անանունը լինիմ բայի հետ գործածել են միայն ուղղական հոլովով ենթականեր:
5. Գրաբարում, հատկապես հունաբան հայերենի շրջանում, տրական հոլովով ենթականեր գործածվում էին անորոշ դերբայով արտահայտված ստորոգյալների հետ: Այդպիսի ենթակաները Գ. Խաչատրյանն անվանում է փոխակերպված և նշում, որ նման նախադասությունները ունեն նաև ուղղական հոլովով դրված բուն ենթականեր:[5] Ուսումնասիրվող հեղինակներից նմանօրինակ կառույցներ գործածել են միայն Հովհ. Դրասխանակերտցին և Թովմա Արծրունին: Այսպես «Բաբելացւոցն Բէլայ ասացաւ, երկոտասան արդու ալեր և քառասուն ոչխար ի միում գիշերի ուտել Բէլայ» (Արծր., 38): Սեռականով ենթակա և անորոշ դերբայով ստորոգյալ ունեցող նախադասությունը հանդես է գալիս բարդ ստորադասական նախադասության կազմում՝ իբրև գլխավոր նախադասության լրացում, և կարող է թարգմանվել նաև որպես դերբայական դարձվածք: Արծրունին այսպիսի երկու կառույց ունի, մինչդեռ Դրասխանակերտցին այսօրինակ նախադասություններ հաճախ է գործածում, ինչպես՝ «Մինչև զարմանալ զօրավարին ընդ սորայս քաջութիւն՝ գրէ առ Միքայէլ թագաւորն Յունաց զեկուցանելով վասն նորա» (Արծր., 302): «Եւ փոխանակ նորա Յազկերտի որդւոյ նորա թագաւորել» (Դրասխ., 60): «Զոր ի կանտոցահար աղեբախս ընդ վիշապաց համբաւէին կռուիլ նմա և յաղթել» (Դրասխ., 24): «Եւ ըստ առաջնոյ նուիրմանն 'ի Տեառնէ Աստուծոյ լնուլ և 'ի նոսա ևս զօրհնութիւնսն յաճել և 'ի բազմանալ լնուլ զերկիր և տիրել մարդկան սմա և որ ինչ 'ի սմա» (Դրասխ., 12):«Եւ անդ ապա լինել ասի յղութեան մօր Գրիգորի» (Դրասխ., 40):

---

[3] Տես՝ Ա. Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 225:
[4] Տես՝, նշվ. աշխ., էջ 399:
[5] Տես՝ Գ. Կ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 23:

Ուխտանեսը տրական հոլովով ենթակա է գործածել անորոշ դերբայի գործիական հոլովածևի հետ, ինչպես «....լսելով զայս մեզ» (Բ-122):

6. Հովհ. Դրասխանակերտցու պատմության մեջ հանդիպում է ենթակայի գործառույթով տրական հոլովի կիրառության մեկ ուշագրավ օրինակ, որում ստորոգյալն արտահայտված է դիմավոր բայով, ինչպես «Եւ Ասքանազայ, որ նախ զմերազնեայսս յիւր անուն Ասքանազեան անուանեաց զՍարամատոս նմա պայազատէր, իսկ Ռիփատայ զՍօրամատս» (Դրասխ., 16): Ընդ որում տրական հոլովով գործածված բառը նախադասության ոչ թե փոխակերպված, այլ բուն ենթական է: Սա շարահյուսական այնպիսի կառույց է, որը ոչ միայն հին հայերենին, այլ ընդհանրապես հայերենին հատուկ չէ:

7. Հովհ. Դրասխանակերտցին անցյալ դերբայով և դիմավոր բայով ստորոգյալների հետ ենթակայի գործառույթով երկու անգամ կիրառել է հայցական հոլովը, ընդ որում ինչպես և նախորդ կետում, այնպես էլ այստեղ հայցական հոլովով արտահայտվել է նախադասության բուն ենթական, ինչը հայերենի նախադասության շարահյուսական կառուցվածքի համար ոչ տիպական երևույթ է: Այսպես «Յետ այսորիկ ապա մեծն Վրթանէս չոգաւ գնաց առ կայսերն Կոստանդոս.... զոր և ողջախոհաբար ընկալեալ զսուրբ այրն» (Դրասխ., 46): «Զոր յաւէտ պատուասիրելիք և փափաքելիք և կենցաղօգուտք ինձ իմանին»(Դրասխ., 6): Այս նախադասություններում որ հարաբերական դերանվան հայցական հոլովածևերը հանդես են եկել իբրև բուն ենթականեր: Ընդհանրապես տրական և հայցական հոլովով ենթականեր ունեցող նախադասությունները հայերենի շարահյուսությանը խորթ երևույթներ են և կազմված են գլխավորապես հունարենի համաբանությամբ[6]: Սակայն այստեղ տեսնում ենք նույնիսկ հունաբան հայերենի համար անսովոր կառույցներ, քանի որ հունարենի համաբանությամբ կազմված նախադասություններում տրական և հայցական հոլովով արտահայտված ենթակաները հայերենում դիտվում են փոխակերպված ենթականեր, որոնք գործողություն կատարող են անվանում կողմնակի կերպով:

Շարահյուսական նմանատիպ կառուցվածքով նախադասություններ, Հովհ. Դրասխանակերտցուց բացի, 10-րդ դ. ոչ մի պատմիչ չի գործածել: Եվ ընդհանրապես, թեք հոլովածևերով արտահայտված ենթականերով կառույցներ հիմնականում նա է գործածել, մի հանգամանք, որը, կարծում ենք, արդյունք է ոչ թե ժամանակի խոսակցական լեզվով, այլ «քերթողական արվեստով» մտքերը շարադրելու նրա ցանկության:

---

[6] Տես Ս. Ղ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 400:

Շատ հաճախ նախադասության մեջ ենթական զեղչվում է, և նման դեպքերում այն ընբռնվում է ստորոգյալի դեմքից ու թվից: Երբեմն զեղչված ենթական արտահայտվում է ստորոգյալի հետ գործածված հոդերի միջոցով:

Ինչպես նշում է Ս. Ղազարյանը, հոդերով ենթականերն արտահայտվում են միայն որոշ տիպի, հատկապես որ , զոր հարաբերականներով սկսվող նախադասություններում:[7] Զեղչված ենթակաների իմաստով հոդերի գործածության օրինակներ ունեն բոլոր պատմիչները: Այսպես՝ «Նա եղիցի գերահրաշ և արփիափայլ շնորհաց տարածիչ և նորոգիչ, և ի բարեկարգ բարեգործութեան յորում էիր և եսդ և եղիցիս» (Ուխտ., Ա-10): Այստեղ դ հոդով արտահայտվել է զեղչված դու ենթական: «Եւ եկեղեցւոյ Աստուծոյ առ ի լրումն պսակաւոր նորոգման մաղթելի է, զոր ասեմս, եթէ եղիցի եղիցի» (Ուխտ., Ա-11): Տվյալ դեպքում ս հոդն արտահայտում է ես ենթական: «Բայց ի մեղաց մնալով այնպէս Աստուած, որպէս էրն յառաջ ընդ Հօր իւրում և սուրբ Հոգւոյն» (Ուխտ., Բ-31): «Քանզի որպէս գրեցաւն Ասուր ի Սեմայ շինէ զՆինուէ» (Արծր., 14): «Ի հօրէ զՍեմեքերիմացն և ի մօրէ զՍամգոնեացն, ըստ ծննդաբանութեան զալ հասանել՝ մինչ յորում եմքս հասեալ ժամանակ» (Արծր., 300): Այստեղ ս հոդով արտահայտվել է մեք ենթական: «Եւ իբրև եհաս առ թագաւորն որ ինչ գրեցաւն »(Արծր., 370): «Եւ իբրև եհաս առ թագաւորն որ ինչ գրեցաւն» (Արծր., 370): «Եւ կալեալ զդեսպանսն հանին զթուղթսն, և զարսն պահեցին ի զգուշութեան, ոչինչ ու մեք զգուշացուցանելով որ ինչ եղևն» (Արծր., 340): Վերջին երկու նախադասություններում ն հոդով արտահայտվել են հարաբերյալները:

Մեսրոպ Վայոցձորցին և Անանունը հոդերի միջոցով զեղչված ենթակայի արտահայտության օրինակներ չունեն:

Գրաբարում ստորոգյալները հիմնականում արտահայտվում են դիմավոր բայերով, ինչպես՝ «Եւ յայնմհետէ ապա հնազանդէին Հայք առաջնորդութեան քաջին Վարդանայ մինչև ցօր մահուան նորա» (Դրասխ., 62): «Իբրև գիտաց բռնաւորն, եթէ յաղթեցաւ ի սրբոց արանցն, մանաւանդ ի քաջէն Գրիգորէ» (Արծր., 250): «Քանզի եգիտ համակամ իւր զխուժիկն զայն Նեստորական և զնմանիսն իւր. որ ինքն իսկ Կիւրոն իբրև զբազմաց խօսի և ոչ զմիոյ» (Ուխտ., Բ-107):

Որոշակի կառույցներում ստորոգյալներն արտահայտվում են անդեմ բայերով՝ մասնավորապես անցյալ և անորոշ դերբայներով, ըստ որում՝ դերբայները մեծամասամբ զուգակից են դիմավոր բայով ստորոգյալին, ինչպես՝ «Ապա ոմն յազգէ ասորի՝ Մար Աբաս Կատինայ անուն, հրամանաւ մերոյն Վաղար-

---

[7] Տե՛ս նույն տեղում, էջ 509:

շակայ երթեալ 'ի դիւանս թագաւորացն Պարսից. որ ուշիմ և վարժ էր մտօք քաղդէարէն և յունարէն դպրութեամբ» (Դրասխ., 16):

Սակավադեպ դերբայներով արտահայտված ստորոգյալներ ունեցող նախադասությունները կազմվում են առանց դիմավոր բայի. ինչպես «Զայս գործ լուեալ Լիդէացւոց թագաւորին Կրոսիսեայ բազմաշփոթ յուզմամբ ամբոխ արարեալ. զօրս բազումս գումարեալ ելանել տալ պատերազմ ընդ Կիւրոսի» (Արծր., 64): «Ոչ բանապաճոյճ մտացածին ինչ վէպս յարմարել՝ քան թէ զծանօթութիւն քաջողջութեան 'ի հոգւոց անտի և ապա յիրս անցեալ զառանցեալ ժամանակաց մատակարարեալ զմեզ» (Դրասխ., 6):

Դերբայական ստորոգյալների հետ սովորաբար գործածվում են թեք հոլովածներով արտահայտված ենթականեր, որոնց անդրադարձել ենք սկզբում:

Ենթական և ստորոգյալը նախադասության մեջ կապակցվում են երկու եղանակով՝ համաձայնության և փոխկառավարման:[8] Եթե համաձայնությունն ակնհայտ է ուղղական հոլովով ենթակա - դիմավոր բայաձևով ստորոգյալ զույգի դեպքում, ապա թեք հոլովածներով (սեռական, տրական, հայցական) ենթակա-անդեմ բայով ստորոգյալ զույգի կապակցման առաջին նախապայմանը փոխկառավարումն է: Այսպես՝ անցյալ դերբայով արտահայտված ստորոգյալները հիմանականում պահանջում են սեռական հոլովով (հազվադեպ՝ ուղղական) դրված ենթակա («Եւ լուեալ թագաւորին Պապայ զայն», Մեսր., 98), անորոշ դերբայով արտահայտված ստորոգյալները՝ սեռական կամ տրական հոլովով ենթակա («Որպէս դառնալ նորա ի չար ճանապարհէն», Արծր., 30): «Զոր 'ի կանտոցահար աղեբախս....համբաւէին կռուիլ նմա և յաղթել» ,Դրասխ., 24), միադիմի բայերով արտահայտվածները՝ տրական հոլովով ենթակա («Արդ զի ընդ որս մի՝ և մեզ լիցի լսել զահագին սպառնալիսն Աստուծոյ», (Ուխտ., Բ-30): Փաստերը ցույց են տալիս, որ երբեմն թեք հոլովածներով ենթականեր կարող են հանդիպել նաև դիմավոր բայերով ստորոգյալների հետ, սակայն սրանք, ինչպես արդեն նշել ենք, հայերենի համար տիպական կառույցներ չեն:

Ինչ վերաբերում է շարահյուսական նմանատիպ կառուցվածքներում սռկա համաձայնությանը, ապա այստեղ միօրինակություն չկա, այս հարցում 10-րդ դարի պատմիչները հետևողականություն չեն ցուցաբերել. երբեմն անցյալ դերբայով ստորոգյալները հոգնակի ենթակաների հետ հոգնակի են գործածվել, երբեմն՝ եզակի, ինչպես «Զկնի նոցա Վաղարշակ Պարթև թագաւորէ

---

[8] Տե՛ս Ս. Գ. Աբրահամյան, ժամանակակից հայերենի քերականություն, Եր., 1975, էջ 275: Գ. Կ. Խաչատրյան, Գրաբարի վերլուծական բայերի արժույթը, Եր., 2000, էջ 15:

տանս Թորգոմայ և զկնի նորուն սերունդք մեզ միապետալ» (Դրասխ., 8): «Որք ընդ լծով հարկի այլոց ոմանց կացեալք ամենացունց նոցա լծադիր և հարկապահանջ լինէր» (Դրասխ., 24): «Գետք հրեղէն յորդալք մաքրելով զերկիր անմաքուր գործոց մարդկան» (Մեսր., 123): «Եւ զօրացն Հռովմայեցւոց ճապաղեալ յաշխարհս հեռաւորս և ոչ ժամանեալ անդ առ ժամայն» (Մեսր., 114):

Ուղղական հոլովով ենթակա - դիմավոր բայով ստորոգյալ զույգի կապակցման միջոցը համաձայնությունն է, որը, ըստ Ս. Աբրահամյանի, միաժամանակ կարելի է համարել հավասարական վերագրման հարաբերություն (Գ. Խաչատրյանը գործածում է «փոխկառավարում» եզրույթը)[9]: Դիմավոր բայերով արտահայտված ստորոգյալի ենթական արտահայտվում է ուղղական հոլովով և համաձայնում է ստորոգյալի հետ դեմքով և թվով: Սակայն 10-րդ դարի պատմագրության մեջ հանդիպում են ենթակայի և ստորոգյալի անհամաձայնության մի շարք դեպքեր, ինչպես՝ «Եւ վասն զի այսոքիկ այսպէս քեզ տեսանել եղև» (Դրասխ., 12): «Սորա արիական քաջամասնութեան հանդէսք բաւական քեզ յառաջնոցն քան զիս մատենագրացն պատմի (Դրասխ., 18): «Սա բազում գրեանս խօսեցաւ, և էր ի նոսա բանք՝ որ ոչ էր ընդունելի» (Ուխտ., Ա-70): «Եւ որ այլ ինչ գործք ի նմանէ գործեալ էր» (Ուխտ., Բ-6): «Եւ անկարգ նորա բանքն եղև նոցա հոտ մխախառն» (Ուխտ., Բ-38): «Զորմէ ցեղէ սկիզբն առ աճել սերունդք Արծրունեաց» (Արծր., 12): «Որոց և շիթք ցօղոյն ունէր զանհամեմատ անուշահոտութիւն (Արծր., 50): «Խաղաղասէր բարք նոցա պահէր» (Արծր., 56):

Շատ հաճախ հավաքական իմաստ արտահայտող, սակայն ձևով եզակի ենթակաների ստորոգյալները դրվել են հոգնակի թվով, օրինակ՝ «Իսկ այն զօր, որ 'ի կողմանս առաքեցան յապստամբող յոստիկանէն» (Դրասխ., 232): «Եթէ ազգն Հայոց նենժէոտք և բարձրավիզք և անհանգանդքն են» (Մեսր., 85): «Իսկ գունդն Հայոց.... դիաթաւալ կացուցանէին զնոսա» (Մեսր., 90): «Եւ զօր Պարսից արքային որ յաշխարհին՝ ոչ գիտացին» (Արծր., 148): «Եւ գունդն Հայոց խաղացին ընդդէմ նոցա» (Արծր., 230): Փաստերը ցույց են տալիս, որ ենթակայի և ստորոգյալի անհամաձայնություն հիմանականում դրսևորում է այն դեպքում, երբ ենթական արտահայտված է գրաբարում իբրև հոգնակի գործածվող այնպիսի գոյականներով, որոնք հետո կորցրել են հոգնակիության իմաստը[10]: Այսպես՝ «Իսկ ցրտաշունչ սառնամանիք ծմեռայնոյն առաւել բերէր զլքացումն հեծութեան» (Դրասխ., 136): «Եւ ոչ մեղկաշօշափ ձեռք նորա կարաց

---

[9] Տե՛ս Ս.Գ. Աբրահամյան, նույն տեղում, էջ 275, Գ. Կ. Խաչատրյան, նույն տեղում, էջ 14:

[10] Սրանք կոչվում են անեզական գոյականներ (տե՛ս Ա.Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 20) չնայած մատենագրության մեջ հաճախ են հանդիպում առանց -ք հոգնակերտի:

դողացուցանել զմեզ» (Դրասխ., 282): «Եւ իբրև սառնամանիք ... բաց եդաւ» (Դրասխ., 308): «Զազրանայ ամենայն դէմի մարդկան» (Մեսր., 119): «Զի և հետք ևս յիշատակի այլոց ... մի երևացի» (Արծր., 44): «Ամենայն բարքս Որմզդի է» (Արծր., 46): «Ճայթիցէ ի վերայ քո երկինք» (Արծր., 148): 10-րդ դարի բոլոր պատմիչներից Ուխտանեսն ամենահաճախն է անեզական ենթակայի հետ եզակի թվով ստորոգյալ գործածում, ինչպես «Որչափ միտք մեր բաւիցէ» (Ուխտ., Բ-114): «Եւ ի նմանէ բղխէ ամենայն բարիք» (Ուխտ., Ա-4): «Զի շնորհք սուրբ Հոգւոյն ... պարգևացի ձեռնատու լինելով մեզ ի գործս» (Ուխտ., Ա-12): «Վասնզի զայսոսիկ խնդրէր կամք իմ ի քէն հանդերձ մախթանօք» (Ուխտ., Ա-15): «Իսկ շնորհք հոգւոյն.... կոչէաց, ծգեաց» (Ուխտ., Բ-11): «Անծայտ իմն եթէ յումեմնէ եղև ելք կենաց սրբոյն» (Ուխտ., Բ-124):

Այս բոլոր փաստերը վկայում են այն մասին, որ 10-րդ դ. գրաբարի անեզական գոյականների մի մասն արդեն կորցրել էր հոգնակիության իմաստը և գիտակցվում էր իբրև եզակի: Հոգնակի ստորոգյալների հետ սրանց գործածության փաստերը թերևս պայմանավորված են այն հանգամանքով, որ պատմիչները ձգտել են պահպանել 5-րդ դ. լեզվական օրինաչափությունները: Կարծում ենք, որ խոսակցական լեզվում սրանք արդեն գործածվում էին իբրև եզակի գոյականներ, և բոլորովին պատահական չէ, որ եզակի թվով սրանց գործածության ամենաշատ փաստերը գտնում ենք Ուխտանես եպիսկոպոսի պատմության մեջ:

Համառոտագրություններ

Անան. - Անանուն, Պատմութիւն Անանուան, Եր., 1985:
Դրասխ. – Հովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ, Պատմութիւն Հայոց, Եր., 1996:
Արծր. – Թովմա Արծրունի, Պատմութիւն Տանն Արծրունեաց, Եր., 1985:
Մեսր. - Մեսրոպ Վայոցձորցի, Պատմութիւն Հայոց, Մադրաս, 1775:
Ուխտ. - Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն Հայրապետաց և թագաւորաց Հայոց, Վաղարշապատ, 1871: